պիսով հաց վաստակում, բայց այդ զբաղմունքը տեւում է միայն ութ ամիս:

1870 թուին Դուրեանը մտնում է Սկիւտարի Պաղլար Բաշիի թատրոնի դերասանական խմբի մէջ: Ակնատեսների վկայութեամբ նա շնորհալի էր խաղում, անգամ որոշ դերերում աւելի է աչքի ընկել, քան հանճարեղ դերասան Պետրոս Ադամեանը:

Դուրեանը տեսնելով, որ դերասանութիւնն էլ նրան նիւթապէս չի ապահովում, այլ յաճախ գրպանը դատարկ մնալով թշուառ եւ անպատիւ դրութեան է մատնւում, «անկողին առնելով՝ թատրոնից տուն է փոխադրւում», քանի որ նա գիշերները սովորութիւն էր դարձրել թատրոնում քնել:

Դպրոցից դուրս Դուրեանն ապրել է չորս տարի միայն եւ այդ տարիների ընթացքում նա գոյութեան ահաւոր կռիւ է մղել մի կողմից հիւծախտի, միւս կողմից տնտեսական կարիքի դէմ: Մի կտոր հացի համար նա երբեմն դառնում է դեղատան աշկերտ, երբեմն սեղանաւորի գրագիր կամ մատնաւոր դասեր տուող ուսուցիչ, երբեմն էլ դերասան կամ թատերդրութիւններ գրող ու վաճառող: Սակայն, այդ բոլոր զբաղմունքները նրան ոչ թէ միայն ոսքի չեն կանգնեցնում, այլ աւելի են հիւծում եւ արագացնում նրա վաղաժամ մահը:

Մկրտիչ Պեշիկթաշլեանը, որ արդէն անուանի բանաստեղծ էր եւ մի օր խոստովանել էր, թէ «այս երիտասարդն ինձ պիտի դերազանցէ», ապա Խորէն Նարպէյը, Թոմաս Թերզեանը, Սրապիոն Հեքիմեանը, որոնք բոլորն էլ գիտակցում էին եւ ընդունում Դուրեանի տաղանդաւոր լինելը, չկարողացան փրկել իր կեանքի ողբերգութիւնն ապրող պատանուն, որ այնքա՜ն շատ եւ պիտանի բաներ կարող էր արտադրել հայ գրականութեան համար:

1871 թուի Դեկտեմբերի վերջին, երբ մօտենում էր 1872 թուի Կաղանդը, Դուրեանն ասում էր իր ծնողներին, թէ «այս տարի աղուոր Կաղանդ մը ընենք», որովհետեւ խեղճը գիտակցում էր, որ այլեւս ուրիշ կաղանդ չպիտի տեսնէ: Եւ իրօք, 1872 թուի Յունուար 20-ին, թոքախտից զարկուած Դուրեանը, որ տառապում էր անկողնու մէջ, կանչում է իր մօտ ծնողներին եւ յայտնում նրանց, որ ինքը մեռնում է, բայց խնդրում է իրեն թաղել չուքով, թէպէտ ինքը մեռնելուց յետոյ չի զգալու այդ:

Պէտք է ասել, որ բանաստեղծի մեծ եղբայր Յարութիւնը եւ նրա բազմաթիւ յարգողները ջանք չխնայեցին եւ փառաւոր թաղում կազմակերպեցին «Սկիւտարի սոխակի» համար, որի անուշ եւ տխուր դայլայլիկները մինչեւ այսօր չեն մոռացուել:

Դուրեանի յուղարկաւորութեանը մասնակցում էին 4000-ից աւելի համակրողներ:

Սկիւտարի Ընթերցասէրաց ընկերութիւնը մահուանից յետոյ է միայն կարողանում գնահատել տաղանդաւոր բանաստեղծին եւ հէնց նոյն տարին, 1872 թուին, լոյս է ընծայում նրա գրուածքները, որոշ օժանդակութիւն է հասցնում բանաստեղծի հարազատներին, այլ եւ մի համեստ շիրիմ է կանգնեցնում նրա գերեզմանի վրայ, որի տապանագիրը գրել է փոքր եղբայրը՝ Միհրանը՝ այսինքն՝ Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը:

Մինչդեռ իր կենդանութեան օրով նա չէր յաջողում «մի քանի պատառ թղթերի վրայ գրած արցունքոտ տողերն արեւի լոյս տեսցընել», մահուանից յետոյ անմիջապէս տպագրւում են նրանք եւ դառնում հայ ժողովրդի սեփականութիւնը: Զմոռանանք ասել, որ «Վէրք Հայաստանին» էլ լոյս տեսաւ Արովեանի մահից յետոյ, բայց տասը տարի անցած...

Զքաւորութեան, անյաջող սիրոյ, հիւծախտի եւ սեւ ճակատագրի անողորմ հարուածներին ենթարկուած պատանին իջաւ գերեզման մրմնջալով՝

Հէյ մարդկութեան մէկ ոտը գօս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ.
Զօգնած անոր՝ մեռնի՛լ անիշան,
Ո՞հ, ա՛յս է սոսկ ցաւ ինձ համար:

III

ԴՈՒՐԵԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՒ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Նախ քան բանաստեղծի նկարագրին եւ բնաւորութեանն անցնելը, չմոռանամ ասել, թէ այն լուսանկարը, որ յայտնի է մեզ իբրեւ Դուրեան՝ այնքան պայմանական է եւ մօտաւոր, որքան մեր ազգային եւ պատմական դէմքերի լուսանկարները...